ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՊԵՄԶԱՇԵՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ N 3-Ա

« 13» հունվար 2016 թվական գյուղ Պեմզաշեն

ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ (ԳՄԸՀ) <<ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ>> ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՊԵՄԶԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ ՀԻՄՆԵԼՈՒ ԾՐԱԳԻՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԱՅԼ ՄԻՋՈՑՆԵՐ ՆԵՐԳՐԱՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի, 66-րդ հոդվածի 3-րդ մասի, <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 9-րդ կետի և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի նոյեմբերի 10-ի համայնքների խոշորացման և միջահայնքային միավորումների ձևավորման հայեցակարգը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Պեմզաշենի համայնքի ավագանին

որոշում է՝

1. Ընդունել ի գիտություն, որ Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄԸՀ) <<Համայնքների զարգացումը հարավային կովկասում>> ծրագրի կողմից Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Պեմզաշենի գյուղապետարանում համայնքների խոշորացման արդյունքում համայնքում <<Պեմզաշենի գյուղապետարան՝ քաղաքացիների սպասարկման գրասենյակի վերակառուցման և վերանորոգման աշխատանքներ>> ներկայացված ծրագիրը արժանացել է հավանության (ծրագրի բյուջեն՝ 9 150.51 հազար դրամ, որից՝ 9,150.51 հազար դրամը (100.00%) Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄԸՀ) ներդրում և Պեմզաշենի համայնքը ճանաչվել է ընտրված համայնք:

2. Որպես օրենքով սահմանված այլ միջոցների ներգրավում, Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄԸՀ) << Համայնքների զարգացումը Հարավային կովկասում>> ծրագրի շրջանակներում Պեմզաշենի համայնքում իրականացնել <<Պեմզաշենի գյուղապետարան՝ քաղաքացիների սպասարկման գրասենյակի վերակառուցման և վերանորոգման աշխատանքներ>> ծրագիրը:

3. Ծրագրի իրականացման գործընթացն սկսելու, Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄԸՀ) և համայնքի կողմից տրամադրվող դրամական միջոցները տեղադրելու և ծրագրի շրջանակներում ֆինանսական գործառույթներ իրականացնելու նպատակով Հայաստանի Հանրապետության գանձապետական համակարգում բացել առանձնացված արտաբյուջետային հաշիվ:

4. Պեմզաշենի համայնքի ղեկավար Անան Ոսկանյանին, կազմակերպել ծրագրի կառավարումն ու ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ՝ 7 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

Գ. ՀԱՐՈՅԱՆ՝ կողմ ----------

Ա.՝ ԽԻՄՈՅԱՆ՝ կողմ ----------

Կ. ԴԱՎԹՅԱՆ՝ կողմ ----------

Տ. ՊՈՂՈՍՅԱՆ՝ կողմ ----------

Ա. ՈՍԿԱՆՅԱՆ՝ կողմ ----------

Ժ. ՈՍԿԱՆՅԱՆ՝ կողմ ----------

Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ կողմ ----------

ՊԵՄԶԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՆԱՆ ՈՍԿԱՆՅԱՆ**

«13» հունվար 2016 թվական
գյուղ Պեմզաշեն